

# ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

---

ՄԵԾԿԵՐՏԻ ՌԻՄՈՒՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

---



ՏՊԱՐՈՒ

«ԵՐԻՑՅԱՆԱՐԴ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՓՐԱՎԻՏԱՆ

1914

# ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԵԾԿԵՐՏԻ ՌԻՍՈՒՄՆ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՑԱ.ՍՍ.ՐԴ. ՀԱ.ՅԱ.ՍՏԱ.Ն»ի

ՓՐԱՎԻՏԷՆՈՒՄ

1914

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մայր Հայրենիքէն դէպ Ամերիկա ու երբ Մեծ-կերտցիներ ալ գաղթելու ստիպման տակ զգացած են ինքինքնին, անոնցմէ շատեր այն Արևին տակ ի ծխիթարութիւն առ Հայրենիք՝ անոր ճատաղ սերունդի դաստիարակման նիւթապէս օգնելու համար տարիներ առաջ Ուսում. Ընկերութեան մը գոյութեան սիւները կերտած և աւելի քան 6-7 տարիներ 1897-1903 տեղւոյն երկսեռ վարժարանաց օգնելով անուրանալի է և սա լաւ շրջան մը բոլորեց քան որ յետ այնու:

Ինչ ինչ պատճառաւ 1902ին խախտեցաւ այս ծիռթիւնը և ընկերութիւնը լուծւելու ստիպման տակ դտաւ ինքինք. թէ ինչո՞ւ

— Որովհետև այդ նոյն թւականին Մեծկերտցիներս սկսած էինք նւազ թիւ մը կազմել և այս պարագային տակ բոլորովին ցրւած և ջլատւած ուժերով:

Սահմանադրութիւնը սակայն կարելի է ըսել ղըժքաղաքար թէ՛ բարեբաղզաբար երբ մէկ կողմէ սկսած է շատ աւելի որբացնել ու երբ անոնք ալիքներու վէտովէտումին պէս մէկ մէկու կը յաջորդեն շուտ մը եզերք—Ամերիկա հասնելու:

Ու երբ այսպէս ուժեր են որ կը խորտակւին մէկ միջավայրէն միւսը սլանալու հոն անոնք կուգան համախմբւիլ մէկ նպատակի շուրջ ՄԱՏԱԴ ՍԵՐՈՒՆԴ և ԱՊԱԳԱՑՆ:

Անցեալի փառքը խօսող այն նշանաւոր բերդաքաղաքը այսօր հասարակ գիւղաքաղաքի երևոյթին տակ ի՞նչ ունի...

Զբաւոր ժողովուրդ մը թէպէտ մեծամասնութեամբ կազմեալ ըլլայ դեռ ևս հայերէ. իսկ անոր շուրջ

գտնւած երբեմնի հայաբնակ գիւղերը կամ ամայացած կամ փուշն ու տատասկը հոն բոյն դրած և կան ալ որ քրդա՛ս հասարակային երևոյթի տակ միայն հայ:

Ուրեմն ուսում և գիտութիւն տարածել պէտք է հոն ուր ճայրենի լեզուն ուժացածներ շատ աւելի են մանաւանդ հո՞ն ուր սոսկալի խաւարը կը տիրապետէ:

Լոյսի տակ ապրողներ աւելի ևս զգայուն են խաւարի դառնութեան և յեղաշրջումն ալ ուղղակի առաջ կուգայ անոնցմէ:

Քալենք ուրեմն համագործակցութեան նոյն շարդէն և ձեռք ձեռքի տալով, որպէսզի կարենանք յաղթել ան մոք ուժերուն որոնք մեր հայրենիքը կաւերեն օձախներ քանդելով:

Մեր իտիալը հոն է և որու մասին մարմնացեալ սէր կը տածենք — առ հայրենիք:

## ԾՐԱԳԻՐ

### ՄԵԾԿԵՐԸ ՈՒՍՈՒՄՆ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 1.— Մայիս 1, 1910ին վերակազմւած է ընկերութիւնս «Ուսումնասիրաց Ընկ. Մեծկերտի» անւաճր:

Յօդ. 2.— Ընկերութիւնս իրեն որոշ նպատակ ըրած է կրթական գործին համար նիւթական ու բարույական զոհողութիւններու առջև պատրաստակամ զըտնիւի կարենալու համար Մեծկերտի մատաղ սերունդը դաստիարակել այնպէս, ինչ որ ներկայի և ապագայի պահանջ կը նկատուի:

Յօդ. 3.— Արական և իգական սեռի դաստիարակութիւնը հաւասար կշիռ և արժեք ունին, ուրեմն մին անտեսել և միւսին գերազաս իրաւունք տալ երբէք այս ծրագրի ողին չկազմեր: Երկու սեռի դաստիարակութիւնը հաւասար գնահատումն ենթակայ է: Քանակ և որակ հաւասարակշռելու են դպրոց. պիտմէն: (Ուրակ բառը հոս գործածած է որպէս աստիճանաբար բարձր ուսանողական կեանքի մէջ):

Յօդ. 4.— Դպրոցը անկախ հաստատութիւն մ'է ո՛չ ենթակայ ուրեմն անհատներու կամ աղայական աղղեցութեան: Հոգաբարձութիւնը կը ներկայանայ ընկերութեանս և թէ ժողովրդեան առջև որպէս պատասխանատու մարմին, իսկ դպրոցի սեմէն ներս անոր որպէս հսկող մարմնի իրաւասութիւնը անձեռնմխելի է:

Յօդ. 5.— Ընկերութիւնս իր պատգամաւորական ժողովին մէջ կընտրէ հոգաբարձութիւնը որուն նախագահը և տեսուչ ալ կը կոչւի: Այս մարմնի ընտրու-

թիւնը կատարելէ վերջ ճառնաւոր զեկուցազրով կը յանձնարարէ տեղւոյն թաղականութեան առ ի վաւերացում երկուստեք որմէ յետ նա սկսելու է իր յատուկ պաշտօնին:

Յօդ. 6.— Մինչև նոր հոգաբարձութեան ընտրութիւն հինը օրինաւոր կը ճանչցի:

Յօդ. 7.— Որքան որ հոգաբարձութեան և տեսչի ընտրութիւնը ընկերութիւնն մեծաւ մասսամբ իրեն վերապահած է, այսուհանդեռձ երբ անոնցմէ մին կամ միւսը հրաժարի կամ պատճառաբանութիւն ունենայ հրաժարելու կամ թէ երբ մին թերութեան մէջ գտնւի իր պաշտօնին նկատմամբ, թաղականութեան իրաւունք կը տրւի իր կողմանէ ուրիշ ճը ընտրելու:

Յօդ. 8.— Երբ հայոց Միաց. Ընկերութիւն ճուտք գտած չէ հոն, ուսուցիչներու և ուսուցչուհիներու ընտրութիւնը թաղականութեան և հոգաբարձութեան հաւանութեամբ և բարձր վարժարանի շրջանաւարտողներ ընտրելու են: Նկարազրի ազնւութիւն և կարողութիւն ի նկատի պէտք է ունենալ ընտրելիներու ճասին:

Յօդ. 9.— Երաժիշտ և Գ. ական ուսուցիչը տեղւոյն վրայ ընտրելու են: Մատաղ սերունդը քաջալերող գրաւական մ'է սս, որոնք օր մ'ալ ինքզինքնին կարող կը լինին ընտրելի ներկայացներու:

Յօդ. 10.— Դպրոցի աղքատ ուսանողներ ձրի կը նդունին, որոնց համար և ձրի է դասական պիտոյք, հարուստներու և բարեկեցիկներու զաւակներ թոշակաւոր են

### ԵԿԱՄՈՒՏ

Յօդ. 11.— Նոր անդամ ճը պարտի վճարել 5 տոլ. ճուտք և 25 սէնթ ամսավճար Ամերիկայի մէջ: Ոչ

նւազ 5 դրշ. էն ճուտք և ամսէ ամիս դէթ 40 փրկ. ամսավճար երկրի համար:

Օտար երկրացիներ կամ մօտակայ գիւղացիներ 1 տոլար ճուտքով եւ 25 սէնթ ամսավճարով ընկերութիւնս այսպիսիներ անդամ կընդունի որոնք կը վայելեն ընարելու բայց ոչ ընտրելու իրաւունք:

Յօդ. 12.— Հանդէս խնջոյներ, ներկայացում հասոյթի երկրորդ աղբիւրներն են:

Յօդ. 13.— Կամաւոր նւէրներ եւ վիճակահանութիւն:

### ԱՆԴԱՐՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 14.— Առանց սեռի և կրօնի յարանւանական խտրութեան ամեն անոնք որոնք նւազ 15 տարիք չեն ներկայացներ եւ երբ ծրագրի տրամադրութիւնները կընդունին, այնպիսիներ իրենց մասնակցութիւնն եւ օժանդակութիւնը կրնան ունենալ ընկերութեանս շարքերուն մէջ:

Յօդ. 15.— Մէն մի անդամէ կը պահանջւի յարգել ծրագրի տրամադրութիւնները:

Յօդ. 16.— Հրաժարեալ անդամ ճը բնաւ իրաւունք չունենար ընկերութեանս տրամադրած կամ նւիրածները ետ պահանջելու «Զոհէ՛ քու յօժար կամօք և նախագիտակցութեամբ», Աշա ի պատասխան այնպիսեաց:

Յօդ. 17.— Երբ մէկը աւելի քան տարի ճը կը յապաղի կատարել իր նիւթական օգնութիւններն ու խոստումները, գրաւորապէս բացատրութիւն կը պահանջւի ու երբ յամառի և կամ ոչ բանաւոր պատճառներ ցոյց տայ, ընկերութիւնս զանի զոհողութեան բաժնին մէջ դասալիք կը նկատէ և զիծ ճը անոր անունը կրող տողին վրայ կը բաւէ զանի ճուռացութեան տալ:

Յօդ. 18.— Սնհատ մը երբ զժոտած է ասոր կամ անոր հետ թող իրաւունք չնկատէ իրեն համար ի սպառ հեռանալ ընկերութեանս շարքերէն։ Եսը հանրութիւն յներկայացներ և պէտք է դիտել թէ նւիրական գաղափարի շուրջ է որ բոլորած ենք ճենք։ Խղճի խաղաղութիւնը ճարդ կարող է գտնել միայն ու միայն ուրիշներ երշանկացնելու մէջ։

Յօդ. 19.— Երբ անհատ մը դիտումնաւոր արգելք և խոշնոտ կուզէ յարուցանել Ուսումնասիրացի գոյութեան և անոր քայլայումը եսական ու անխիղճ նպատակ ըրած, այնպիսին կը վտարւի ընկերութեանս շարքերէն ընդհանուր պատգամաւորական ժողովի և իր պատկանած մասնաճիւղի հաւանութեամբ։ Որևէ անդամական ժողով կարող չէ ինքնին այսպիսի վիժածներ՝ եթէ կան և գոյութիւն ունին՝ իր մէջէն զանոնք արտաքսել։ Նա իրաւունք ունի շրջահայեաց լինել և այսպիսի մը հետ յարաքերելէ դաղրիլ, վերջին վժիու՝ արտաքսման վժիու՝ վերապահելով Ընդհ. Պատգ. Ժողովի։

Յօդ. 20.— Կեղծ և դրամաշորթ անհատներ միանգամ ընդմիշտ կը վտարւին ընկ. Շարքերէն. ասպիսիներ և կայլանւին թերթերու մէջ իրենց գործած արարքին համար։

Յօդ. 21.— Այն անհատը որ մէկ վայրկեանէն միւսը անդամ-ճանչնչւած է և կանխիկ իր մուտքը վը-ճարած՝ իրաւունք կը վայելէ թէ ընտրելու և թէ ընտրւելու։

Յօդ. 22.— Ուևէ անհատ երբ ստիպւի հեռանալ մէկ մասնաճիւղէ այլուր և երբ հոն մասնաճիւղ չկայ ու գոյութիւն չունի պարտաւոր է իր տուրքերը Գործադիր Մարմնոյ դրկել և անկէ պահանջել ստացագիր։

Յօդ. 23.— Մէկ մասնաճիւղէն միւս մասնաճիւղին

մէջ արձանագրւող անհատ մը ըլլայ իր յօժար կամօք, պարագաներու ստիպման տակ կամ տեղափոխութեան պատճառաւ միշտ ի ձեռին ունենալու է մասնաճիւղի վարչութեան կողմանէ ստացագիր, մը որ իրեն իրաւունք կուտայ իր յետնեալ ամսավճարներն ի ցոյց տալու և կամ մինչև այն թւականը յիշեցնող և որ ատեն նասկած է արդէն պատկանիւլ այն ցոյց Մ.Ճիւղին։

Յօդ. 24.— Ուևէ անհատ երբ իր յօժար կամօք հեռացած է ընկերութեանս շարքերէն եւ երբ այնպիսին դէմ գանգատ բողոք չկան, կարող է իր յօժար կամօք անդամակցիլ դարձեալ, միանգանայն իր յետնեալ պարտքերը վճարելով ընկերութեան սնտուկին։

#### ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Յօդ. 25.— Ընկերութիւնս կունենայ իր Գործադիր Մարմինը, որուն կը յանձնէի ընկերութեանս նիւթական ուժը, այսպիսի մարմին մը կը նտրւի ընկերութեանս կարող եւ շատ աւելի հաւատարիմ ու պարկեշտ ճանչ-ցւած անհատներէն։

Յօդ. 26.— Գործադիր Մարմնոյն միայն իրաւունք նախասահմանւած է յարաքերութեան մէջ մնալ Ազգ. կրթական ու բարեգործական հաստատութիւններու, Ազգ. Պատրիարքարանի, Մեծկերտի թաղականութեան եւ հոգաբարձութեան եւ այլ կարգի հաստատութիւններու հետ։ Գործադիր Մարմինը միակն է Ընկ. կազմին մէջ որ կը ներկայացնէ ամբողջ ընկերութիւնը իր ունեցած բոլոր ուժերով։

Յօդ. 27.— Գործադիր Մարմինը կը նտրւի ամեն տարի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն ու միշտ գաղտնի բւէարկութեամբ։ Անոր որոշեալ ժամանակամիջոցն է մէկ տարի Յուլիս 4է յաջորդող Յուլիս 4։

Յօդ. 28.— Գործադիր Մարմինը յաջորդ Պատգ. Ժողովէն երբ վստահութեան քւէ շահի կրնայ վերընտրւիլ, ամբողջական ընտրութիւնը բեկանւելով կրնան վերընտրւիլ ճասնակի ընտրելիներ նախորդ վարչութիւնէ միշտ քւէներու մեծամասնութեամբ:

Յօդ. 29.— Գործադիր Մարմինը իր ամբողջ կաղմով պատասխանատու է թէ ընկ. սնտուկին, ելմտական հաշիւներու վերջապէս այն բանին որ իրաւունք չտար իրեն առ սանձարձակ գործունէութիւն, որոնք ընկերութեանս վարկը կարող են չքացնել Դրամական կորուստով բաւելու են անոնք ի վսաս իրենց անձնական նիւթականէն:

Յօդ. 30.— Գործադիր Մարմինը ընտրւելու է կեղրոն ճասնաճիւղերու և զօրաւոր ճասնաճիւղի մը շրջանակին մէջ:

Յօդ. 31.— Գործադիր Մարմինը կը բաղկանայ միշտ հինգ հոգիէ, Ատենապետ, Ատենադպիր, Դանձապետ, Հաշւակալ և Կնքապահէ:

Յօդ. 32.— Ատենապետի պաշտօնն է նախագահել իր յանձնախմբի գումարեալ ծողովներուն, ստորագրել բոլոր պաշտօնական գրութեանց տակ ատենադպրի հետ, Հաշւական գործերու մէջ գանձապետի հետ:

Յօդ. 33.— Ատենադպրի պաշտօնն է, արձանագրել ծողովի օրւան ատենագրութիւնը, պատրաստել թղթակցութիւնները որոնց պատճէնն ունենալ (copy) տետրի մէջ, պահել իր մօտ յանձնախմբի բոլոր գոյւն ու տետրերը:

Յօդ. 34.— Դանձապետի պաշտօնն է գանձել ընկերութեանս ուղղակի և անուղղակի Հասոյթներն, շահագործել զանի տալով Ամերիկան վստահելի պէնք, պահել Bank bookը (Այնտեղ ուր այս պատեհու-

թիւնը չկայ դրամագլուխը կը պահէի կանխիկ ի ձեռին ունենալ): Գանձապետը իր ստացած գումարի փոխարէն տալու է ստացագիր կնքւան ընկ. կնիքով:

Յօդ. 35.— Հաշւակալի պաշտօնն է իր մօտ պահել ընկերութեանս ելմտական բոլոր հաշիւնները. գանձապետի ստացած բոլոր գումարներուն բանակը ուրկէ ստանալը և ժամանակը գրել իր հաշւետոմարի մէջ: Եւ այս ամենուն հետ ինք ալ իր կողմանէ ժամանակին գանձապետէն առնելով ստացագիր:

Յօդ. 36.— Կնքապահի պաշտօնն է ընկերութեանս կնիքը պահէլ իր մօտ, իր գիտութեամբ և ինքն միայն կնքելու է այն գրութիւնները որոնք կը ճանչցւին որպէս պաշտօնական գրութիւն, կնքելու է նահաշւական գրութիւններ, ստացագիր և վերջապէս կընքելու պէտք զգացող բոլոր գրութիւնները:

Յօդ. 37.— Գործադիր Մարմինը պարտաւոր է պաշտօնական բոլոր գրութիւնները և կամ անոնց պատճէնն զրկելու ճասնաճիւղերու վարչութեանց, խմբագրելու է ճասնաճիւղերու ուղղեալ շրջաբերական նամակներ. Մայր տոճարի մէջ արձանագրելու է բոլոր ելմտական հաշիւններն ինչպէս և թղթակցութեանց յատուկ նամականին ոչ նւալ կարևոր չէ:

Յօդ. 38.— Գործադիր Մարմինը ուեէ ձեռնարկի ատեն առնելու է բոլոր ճասնաճիւղերու հաւանութիւնն:

Յօդ. 39.— Գործադիր Մարմինէն ինչ ինչ պատճառաւ եթէ մին հրաժարի կամ այն պաշտօնէին տեղը թափուր մնայ Պատգամաւորական ժողովի մէջ առաւելագոյն քւէ ստացող թեկնա՛ռն կը ճանչցւի միշտ:

Յօդ. 40.— Գործադիր Մարմինը իր ամբողջ կաղմով անպատճառ ներկայ գտնւելու է Պատգամաւորական ժողովի մէջ, որուն մէջ նա 2 ձայնի իրաւունքով կը

մասնակցի ժողովին:

Յօդ. 41.— Նախ քան Պատդ. Ժրդովի եթէ Գործադիր Մարմինը թերո թեան ճէջ գտնուի ինչպէս և բողոքի ենթակայ՝ մասնաձիւղալին Արտակարգ Ժողովը ճը քննելով այս ամենը կը բեկանէ անոր զօրութիւնը եւ իր կողմանէ կընտրէ առժամանակայ Գործադիր Մարմին ճը ճինչեւ ցանօրինութիւն յառաջիկայ Պատգամառական ժողովի:

#### ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 42.— Մասնաձիւղերն և Գործադիր Մարմինն առ նւազն երկու ամիսն անգամ ճը կունենան իրենց յատուկ ժողովներն:

Յօդ. 43.— Որոշ խորհրդածութեանց շուրջ երբ այս ժողովներն այսպէս տեղի կունենան լուծելիք ի ընդիրներն թերու դէմ վեճաբանելէ վերջ քւէլից առաւելութեամբ կորոշւին, այլև առարկելի ապացոյցներն անտեղի են:

Յօդ. 44.— Ընկերութեանս ուսէ նիստը օրինական լինելու համար անդամոց կէսէն աւելին ներկայ ըլլալու է ժողովին:

#### ՄԱՍՆԱՁԻՒՂԵՐ

Յօդ. 45.— Մասնաձիւղ կազմելու համար առ նըւազն եօթն անձերու բաղկացեալ միութիւն ճը անհրաժեշտ է. այս պայմանին տակ նորակազմ Ճ.Ճիւղը իր գոյութիւնը յայտնելով ընկերակցութեանս Գործադիր Մարմանոյն անկէ կստանայ իր Ճ.Ճիւղի անւամբ սեպհական կնիք:

Յօդ. 46.— Այն վայրեր ուր ընկերութեանս համակիրներ թէ համաքաղաքացիներ ցրւած են իրենց ուները մերձաւոր քաղաքներէ՝ բով քովի գալով կարող են

Համախմբակցութիւն կազմել և ձանչցւիլ որպէս մասնաձիւղ ի նկատի ունենալով գէթ ոչ նւազ եօթնի ճիւթիւն:

Յօդ. 47.— Եօթն անձէ նւազ միութիւնը իսմբական մարմին կը ճանչցւի ենթակայ մօտաւոր մասնաձիւղի ինամակալութեան:

Յօդ. 48.— Այնտեղ ուր մասնաձիւղ կազմել դժւարին է, ընկերութեանս անդամակցողներ սիրով կընդունւին մասնաձիւղի շարքերուն ճէջ երբ իրենց կը տենչան, իրենց պատկանած մասնաձիւղի վարչութիւնը թղթակցութեամբ զանոնք գիտակից կը պահէ ընկ. բոլոր գործերուն:

Յօդ. 49.— Ամեն մասնաձիւղ կունենայ իր մասնաձիւղային վարչութիւնը Յ կամ հինգ հոգիէ, ատենապետ, ատենապահիր, գանձապետ և երկրորդին հետ հաշւակալ և կնքապահ. որոնց պաշտօնը պիտի լինի Յօդ. 32, 33, 34, 35, 36ի արամադրութիւնները:

Յօդ. 50.— Մասնաձիւղային վարչութիւնը կընտրուի տարին ճէկ անգամ և միշտ զաղտնի քւէարկութեամբ Ճ.Ճիւղի անդամական ժողովի:

Յօդ. 51.— Մասնաձիւղային վարչութիւնը երբ զեղծան թերութեան ճէջ կը գտնուի, մասնաձիւղային երկրորդ ընտրութիւն տեղի կունենայ և կընտրուի նոր վարչութիւն ճէկ տարի պայմանաժամաւ:

Յօդ. 52.— Մասնաձիւղային վարչութիւնը իրենց բոլոր պաշտօնական յարաբերութիւններն կը կատարեն ճիայն Գործ. Մարմանոյ և քոյր մասնաձիւղերու հետ այն ալ Ամերիկայի ճէջ գտնւածներուն հետ միայն:

Յօդ. 53.— Մասնաձիւղային վարչութիւնը պարտաւոր է պահէլ ելեմտից հաշւետոմար ընդօրինակութիւնը պետք է դրկէ տարեգլխին Ընդհ. Պատգ. ժողովինը պետք է դրկէ տարեգլխին Ընդհ.

վին փոխարէն ստանալով ընկալազիր:

Յօդ. 54. — Մ.ձիւղի վարչութիւնը իր ամբողջ կազմով պատասխանառու է զինք ընտրող ճ.ձիւղին:

Յօդ. 55. — Մ.ձիւղի վարչութիւնը իր ճօտ կը պահէ միայն 15-25 տոլար ընթացիկ ծախքերու հաճար երբ պէտք կզգայ, ապա թէ ոչ ամբողջ հաշիւը դրկելու է որուն հետ և պատրաստի գումարը առ Դործաղիր Մարմին:

Յօդ. 56. — Մասնաձիւղերը ազատ են սարքելու ինչույներ, հանդէսներ ի նպաստ ընկերութեան:

Յօդ. 57. — Մ.ձիւղի վարչութիւնը կարող է քըն-նել ամեն կարգի խնդիր ինչ որ մասնաձիւղալին ան- ւամբ է, վճիռ տալու հաճար Դործ. Մարմնոյ տնօրէնու- թեան դիմելու է:

Յօդ. 58. — Մ.ձիւղի վարչութենէն երբ մին կը հրաժարի ի գիտութեամբ Դործաղիր Մարմնոյ առաւելա- գոյն քւէն շահողին կը վիճակւի թափոր պաշտօնը:

Յօդ. 59. — Մ.ձիւղի օրինական է երբ անոր թիւը դէթ եօթնի միութի ն մ'է, որմէ ն, ազ թէ լինի մ.ձիւղը պէտք է յարի մօտակայ մ.ձիւղին:

Յօդ. 60. — Մ.ձիւղի վարչութեան թուլատրելի չէ վարչական մարմնոյ անւամբ դրամ դնել դրամատուն, Դոյացած դրամը կը դրկւի Դործ. Մարմնոյ:

#### ՊԱՏԳԱՄՍԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 61. — Պատգ. ժողովը միութեանս էն էական ժողովն է որ տեղի կունենայ տարին մէկ անգամ և միշտ Յուլիս 4ին:

Յօդ. 62. — Գործադիր Մարմնոյ կողմանէ 15 օր առաջ բոլոր ճ.ձիւղերուն կը զեկուցւի այս ժողովի վայ-

ըլ, շեշտելով նոյնպէս անոնց որ իրենց հաշիւները փակեն:

Յօդ. 63. — Մէն ճի պատգամաւոր ժողովին մէջ ներկայացնելու է իր ճ.ձիւղի անւամբ իրեն տրւած վը- կայականը:

Յօդ. 64. — Իւրաքանչիւր պատգամաւոր իր ընտ- րած ճ.ձիւղի թիւը երբ եօթն է մէկ ձայն ունի ներկայացնելիք, 10ի հածար 2, 20ի՝ 3 այսպէս իւրա- քանչիւր առաւել տասն 1 ձայն աւելի ներկայացնելու իրաւունք կը տրի:

Յօդ. 65. Պատգամաւորը իր ճ.ձիւղի կողմանէ եթէ ունի հարցեր գրաւորապէս զայն ներկայացնելու է ժողովի քարտուղարին:

Յօդ. 66. — Մ.ձիւղի մը որ գեռաւորութեան պատ- ճառաւ կարող չէ պատգ. դրկելու կրնայ իր ձայնը տալ պատգ. ժողովի ունի անձի և կած անձի մը որ մօտաւորութեան պատճառաւ կարող պիտի լինի մաս- նակյելու ժողովին որպէս հեռաւոր ճ.ձիւղի պատգա- մաւոր ունենալով վկայական նոյն ճ.ձիւղի կողմէ:

Յօդ. 67. — Պատգ. ժողովը նախ կընտրէ իր դի- ւանը որու պաշտօնը պիտի լինի պատրաստել օրակարգ, բննել Դործաղիր Մարմնոյ և ճ.ձիւղերու հաշիւները և ըստ այնմ ներկայացնելով ընդհ. ժողովի առ ի տնօ- րինութիւն:

Յօդ. 68. — Պատգ. ժողովը վաւերացնելով Դործա- ղիր Մարմնոյ հաշիւներն ու տետրակները կը յանձնէ զայն նորընտիր մարմնոյ:

Յօդ. 69. — Պատգ. ժողովը կընտրէ նորընտիր Դործաղիր Մարմնը, ընտրութիւնը կը լինի միշտ գաղտ- նի քւէարկութեամբ և պատրաստ ցանկէ մը միայն ց.էարկելու պայմանաւ:

Յօդ. 70.— Նորընտիր Գործադիր Մարմինը իր ընտառութիւնը յայտնելով բոլոր մ.ճիւղերու վարչութեանց ժողովի արձանագրութիւնն ու տրւած վճիւներն ևս կը հաշորդէ անոնց առ ի գիտութիւն բոլորի:

ԼՈՒԾՈՒԵՐ

Յօդ. 71.— Նոյնիսկ մէկ մ.ճիւղ որ առնւազն 7 անդամէ բաղկացեալ է կարող է Ռւսումնասիրացի գոյցութիւնը թերեւս յարատե պահել, ու երբ այն ուժն աւ խորտակւի այլևս լուծած է այս ընկերութիւնը որուն բոլոր գոյցերն ու դրամները պէտք է որկել Աղք. Պատրիարքարան, Պատրիարքարանն իրաւունք ունի ուսումնասիրացի նպատակին յատկացւած դրամները յանձնել Հայոց Միաց. Ընկերութեան // եծկերտի ազգային երկու վարժարանաց ի նպաստ գործածելու:

---

Այս ծրագիրը յշացւած և ճշակւած է Ա.պրիլ  
19-20, 1914: Յաջորդ պատգամաւորական ժողովներուն (1915 է վերջ) իրաւունք վերապահելով առանց նպատակը յնչել-խեղաթիւրերու ծրագիրը փոփոխութեան ենթարկել երբ պէտք տեսնեի:



